ՃՐԱԳ
ԾԽԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ
JRAK
PARISH NEWS

## MESSAGE OF FAITH

*"For I know the plans I have for you," declares the Lord" plans to prosper you and not to harm you, plans to give you hope and a future. - Jeremiah 29:11*

God knows the future. His plans for us are good and full of hope. He provides our agenda and goes with us as we fulfil His mission. This does not mean that we will be spared pain, suffering or hardship, but that God will see us through to a glorious conclusion.





## Welcome luncheon for our new friends from Syria and Iraq

A luncheon was hosted in the Edgarian hall on 10 January to full capacity with new families and members from various church bodies coming together in what proved to be a very warm and positive atmosphere. The purpose of the gathering was to embrace and welcome the new friends and to encourage and invite them to join in , connect, and bring their participation to our church life.



## Feast of the Holy Nativity & Theophany of our Lord Jesus Christ

Wednesday 6 January: The Godfather-of-the-Cross for the water blessing was Master George Keoshgerian



## Blessing of the Grapes

Blessing of the grapes ceremony was conducted on the lawns following Badarak on Sunday 31 January, under Sydney's blue skies surrounded by a large number of parishioners of all ages and supported by the angelic voices of Karsounk Mangounk Choir. Thanking all who so generously donated grapes for blessing and sharing.

*The tradition of blessing grapes (first fruits) can be traced back to Old Testament times.*





## COMING UP

**LENTEN SUNDAYS**
**Poon Parengentan - Great Lent**
**Episcopal Divine Liturgy: 7 February**

**Sunday 14 February**
**Diarentarach: Presentation of our Lord to the Temple**
**Divine Liturgy at 10.30 a.m.**
*Blessing of Newlyweds*

**Sunday of the Expulsion**
*The separation of mankind from God*

**Sunday 21 February**
**Sunday of the Prodigal Son**
*God's mercy and love*
**Arevakal Service at 10.30 a.m.**

**Sunday 28 February**
**Sunday of the Unjust Steward**
*We are all God's stewards in this world*
**Arevakal Service at 10.30 a.m.**

**HESGOOM – REST HOURS**
*Each Friday of Lent, Hesgoom, evening prayer services will be held followed by relevant scriptural teaching. The penitential nature of these evening prayers reminds us of the effort we make to restore our pure and joyous relationship with God.*
**Services commence at 7.00 p.m. BUT on 12 February at 6.30 p.m.**

## MARK YOUR CALENDARS FOR THESE EVENTS

**Friday 12 February at 7.30 p.m.**
**An Evening With Baroness Caroline Cox**



**Hear about Baroness Cox's mission to Armenia and Karabagh on the Armenian Genocide Centenary and the inspiring facility of the Lady Cox Rehabilitation Centre in Stepanakert**
**Venue: Edgarian Hall**

**Sunday 3 April at 6.30 p.m.**
**Inaugural Primate's Banquet**
**Venue: Dockside, Cockle Bay Wharf Darling Harbour**

## Անառակի Կիրակի

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ապաշխարության և պահքի մի գեղեցիկ շրջան է սահմանել հավատացյալների համար, որի Կիրակիներից յուրաքանչյուրն իր անվանումն ունի Աստվածաշնչի որևէ պատմությանը համապատասխան: Մեծ Պահքի երրորդ Կրրակին կոչվում է Անառակի, ըստ Ղուկասի Ավետարանում հիշատակվող անառակ որդու մասին պատմող առակի՝ (տես Ղուկ. 15:11-32) մի մարդ իր կրտսեր որդու խնդրանքով ունեցվածքը բաժանում է երկու որդիների միջեւ: Կրտսեր որդին իր բաժինը վերցնելով գնում է հեռու երկիր, ապրում ցոփ ու շվայտ կյանքով, վատնում ամբողջ ունեցածը:

Այս դժվար դրության մեջ նա հիշում է հայրական տունը, զղջում կատարածի համար և վերադառնում: Հայրը, տեսնելով որդու զղջումը, ուրախությամբ ընդունում է նրան: Ավագ որդին դժգոհում է, որ ինքը միշտ հոր կողքին է եղել, սակայն նման պատվի երբեք չի արժանացել: Հայրը պատասխանում է, որ պետք է ուրախ լինել, քանի որ՝ ով մեռած էր, կենդանացավ: Ավագ, կրտսեր որդիներն արդար և մեղավոր հոգիներն են, և ինչպես հայրն է անառակ որդուն ընդունում, նույն կերպ էլ Աստված է իր գիրկն առնում զղջացող մեղավորին: Առակը նաեւ հետեւյալ խրատն ունի, որ բացահայտվում է ավագ որդու կերպարում: Ովքեր կարծում են, թե արդար են, պետք է խուսափեն սեփական անձի մասին չափազանց բարձր կարծիք ունենալուց:





## Տնտեսի Կիրակի

Մեծ Պահքի չորրորդ Կիրակին կոչվում է Տնտեսի, ըստ այդ օրվա խորհուրդը բացատրող անիրավ տնտեսի մասին առակի: Այն հիշատակում է միայն Ղուկաս ավետարանիչը, որի բովանդակությունը հետևյալն է: Մի մեծահարուստ իմանում է, որ տնտեսը վատնում է իր ունեցվածքը, կանչում է նրան եւ հաշիվ պահանջում, որոշում հեռացնել աշխատանքից: Տնտեսը հասկանում է, որ կարող է անգործ մնալ, խորամանկության է դիմում: Նա կանչում է տիրոջ պարտապաններին, նրանց շնորհում իրենց ունեցած պարտքի մի մասը: Եվ այս ամենից հետո տերը գովում է տնտեսին՝ հնարամտությամբ վարվելու համար: Առաջին հայացքից թվում է, թե հակասություն կա այս գովեստի մեջ: Բայց անիրավ տնտեսը պարտապաններին շնորհում է այն, ինչն ավելիով գրել էր իր օգտին՝ պարտքի շնորհումով՝ ոչ մի վնաս չպատճառելով իր տիրոջը: Տերը գովում է տնտեսին՝ իր հասանելիք շահույթից հրաժարվելու համար: Այսինքն՝ հույժ գովելի է հրաժարումը, որն էլ հենց պահքի իմաստն է:

Պահքը մարդուն որեւէ գայթակղությունից հրաժարվելու ունակություն է սովորեցնում, հրաժարում, որից սկսվում է ինքնազսպումը կամ անձի ուրացումը: Քրիստոս ասում է. «Եվ ով իր խաչը չի վերցնում ու Իմ ետևից չի գալիս, Ինձ արժանի չէ» (Մատթ. 10:38): Այս առակը հորդորում է յուրաքանչյուրին հրաժարվելով և ինքնազսպմամբ  հասնել փրկության: Առակի այլաբանական իմաստն այս է: Հարուստ մարդը խորհրդանշում է Աստծուն, անիրավ տնտեսը՝ մեղավորին, որը երկար ժամանակ անհոգ կերպով վատնում էր Աստծո տված շնորհները, մինչեւ որ Աստված նրան պատասխանատվության է կանչում: Անիրավ տնտեսը խորհրդանշում է այն բոլոր մարդկանց, ովքեր զղջում են, ներում իրենց պարտապանների պարտքերը եւ սիրելի դառնում հրեշտակներին ու արդարներին: :

**Չորեքշաբթի 6 Յունուար**
Սուրբ Ծնունդ: Ջրօրհնէքի Սուրբ Խաչի կնքահայր Ճորճ Քէոշկէրեան:
**Կիրակի 10 Յունուար**
Սրբազան Հօր  Տէր Հայկազուն Եպիսկոպոս Նաճարեանի եւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Թեմական Խորհուրդի հրաւէրով, Սուրբ Ծննդեան  տօնի առթիւ, Էտկարեան սրահէն ներս հիւրասիրուած էին վերջին տարիներու ընթացքին Սիտնի հաստատուած հայրենակիցներ: Հաւաքոյթին նպատակն էր նորեկներուն Հայ Եկեղեցւոյ եւ գաղութային կեանքի մօտիկ յարաբերութեան:
**Կիրակի 31 Յունուար**
Խաղողօրհնէք Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ բակը յաւարտ Սուրբ եւ Անմահ Պատարագին:

**Հինգշաբթի 4  Փետրուար**
Վարդանանցի տօնակատարութեան Սուրբ Պատարագ, մասնակցութեամբ Հայկական ամէնօրեայ վարժարաններու աշակերտութեան եւ ընդունելութիւն Էտկարեան Սրահէն ներս:

**Կիրակի 7 եւ Երկուշաբթի  8 Փետրուար**
Բուն Բարեկենդան եւ Մեծ Պահք:

**Ուրբաթ  12  Փետրուար**
Ջրոյցի երեկոյ Պարոնէս Գարօլայն Գոքսի հետ Էտկարեան սրահէն ներս ժամը 7:30-ին:

**Կիրակի  14  Փետրուար**
Տիարընդառաջ եւ նորապսակներու օրհնութիւն:

**Կիրակի  21  Փետրուար**
Անառակի Կիրակի:

**Կիրակի  28  Փետրուար**
Տնտեսի Կիրակի:

**Հսկում իւրաքանչիւր Ուրբաթ երեկոյեան Մեծ Պահքի շրջանին:**